№ 9 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 25 **1894** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 25 № 9

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կառավարչական հերքում և հասարակաց կարծիք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի ռուս մարդու կարծիք. Բաւական է. Նամակ Էջմիածնից. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրթութիւնը և դաստիարակութիւնը Ամերիկայում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Ֆինլանդիայից.

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԿԱՐԾԻՔ

—

Պէտք է խոստովանել, որ ամբողջ Թիւրքաց կառավարութեան բարձր շրջանները ահագին նշանակութիւն են տալիս թէ եւրոպական հասարակաց կարծիքին, և թէ բոլոր երկրների մամուլի կարծիքին՝ Թիւրքիայի գործերի վերաբերմամբ, և ամեն միջոց, ամեն աշխատանք գործ դնելով, ձգտում են հաշտ պահել թէ հասարակաց կարծիքը և թէ մամուլը՝ Թիւրքիայի հետ:

Եւ հէնց որ արտասահմանեան որ և է լրագրում տպագրվում են յարձակողական յօդուածներ, Թիւրքիայում և զլխաւորապէս Թիւրքաց Հայաստանում տիրապետող այժմեան կարգերի և քրդերի, չերքեզների կամ կառավարչական պաշտօնեաների ձեռքով կատարված գեղծումների դէմ, իսկոյն Կ. Պոլսի բարձրագոյն կառավարութիւնը հրահանգներ է տալիս իր դեսպաններին, կամ հիւպատոսներին, կամ դիմելով Կ. Պոլսում եղող օտար պետութիւնների ներկայացուցիչներին, աշխատում է կամ ուղղակի հերքումներով, կամ կողմնակի բացատրութիւններով ջրել այդ յարձակումները, խաղաղեցնել վրդովված հասարակաց կարծիքը: Եւ ամեն օր այդպիսի հերքումներ և բացատրութիւններ տրվում են ոչ թէ միայն Լօնդօնում, կամ Պարիզում, այլ նոյն իսկ հեռու Ամերիկայում, որի հետևանքն էր Միացեալ Նահանգների նախագահ Կլիվլենդի վերջին զեկուցումը հայերի մասին, կամ նոյն իսկ աւելի աննշան քաղաքներում, ինչպիսին է Թիֆլիսը: Այդ բաւական չէ. Թիւրքաց կառավարութիւնը աշխատում է հասարակաց կարծիքի և մամուլի տրամադրութեան վրա ազդել նոյն իսկ եւրոպական հռչակ ունեցող անձանց ղրչով, ինչպէս, օրինակ, յայտնի պրոֆէսոր Վամբերի և ուրիշները:

Մենք խոստովանում ենք, որ Թիւրքաց կառավարութեան այդ ջերմեռանդութիւնը և փափագը, յօդուած իրան տրամադրելու թէ հասարակաց կարծիքը և թէ մամուլը,—պատիւ է բերում իրան, իբրև մի կառավարութեան, որ ոչինչ ջանք չէ խնայում ամեն տեղ բարեկամներ ունենալու և թուլացնելու իր դէմ եղած թշնամութիւնը:

Սակայն նոյն իսկ Թիւրքաց կառավարութեան բարեկամները, նոյն իսկ Կ. Պոլսի այժմեան կառավարիչների կողմնակիցները,—եթէ միայն նրանք անկեղծ բարեկամներ և կողմնակիցներ են, պէտք է խոստովանեն, որ կառավարութեան այդ փափագը՝ յօդուածներ տրամադրելու մամուլը և հասարակաց կարծիքը՝ լոկ հերքումներով և դիպլոմատիական բացատրութիւններով, կարող է գուցէ մի օր լռեցնել այս կամ այն լրագրի, կամ մի երկու օրով փոխել հասարակաց կարծիքը. բայց քանի որ միւս կողմից չէ փոխվում երկրի մէջ իրերի դրութիւնը, քանի որ պետութեան սահմաններում շարունակվում են վայրենի ցեղերի հարստահարութիւնները, տնտեսական և վարչական անկարգութիւնների հետ միասին, հանգամանքներ, որոնք անդադար առաջ են բերում անվերջանալի սով, դաղթականութիւն, թշուառութիւն,—այդ դէպքում կառավարութեան հերքումները և դիպլոմատիական բացատրութիւնները դառնում է նոյն իսկ պետութեան համար վնասակար մի խաղ, որից ոչինչ օգուտ չէ կարող ստանալ ոչ Թիւրքիայի ժողովուրդը, ոչ Թիւրքաց պետութիւնը:

Այդ բաւական չէ: Նոյն հասարակաց կարծիքը և նոյն մամուլը, որոնց տրամադրութեան այս բօպէիս ահագին նշանակութիւն է տալիս Թիւրքաց կառավարութիւնը, տեսնելով որ յիրաւի այդ հերքումները և դիպլոմատիական բացատրութիւնները բոլորովին այն չեն պարունակում, ինչ որ դոյութիւն ունի իրականութեան մէջ, վերջի վերջոյ այլ ևս ոչինչ հաւատ չեն ընծայի Թիւրքաց կառավարութեան հերքումներին և ասածներին, եթէ մինչև անգամ մի օր այդ հերքումները պարունակեն նոյն իսկ զուտ ճշմարտութիւն:

Ահա այդ պատճառով, իւրաքանչիւր ոք, որ բարեկամ է Թիւրքաց պետութեան և նրա ժողովրդի շահերին, լինի այդ մի մինիստր, մի դեսպան, մի հիւպատոս, թէ մի վամբերի, պարտական են այն համոզմունքը մտցնել Թիւրքաց կառավարութեան բարձր շրջաններում, որ հերքումներով անկարելի է կաշառել հասարակաց կարծիքը, այլ պէտք է ձեռք դարկել փոխելու երկրի մէջ իրերի անկարգ վիճակը, հաստատելով աւելի արդար կարգեր, հրատարակելով ամբողջ ազգաբնակութեան համար, առանց խարութեան կրօնի և ազգութեան, հաւասար օրէնքներ, տալով երկրին կուլտուրական զարգացման համար անհրաժեշտ պայմաններ:

Ահա այդ է ամենագլխաւորը, որ պէտք է ըմբռնեն Թիւրքիայի անկեղծ բարեկամները: Եւ այդ անելուց յետոյ, համարձակ կասենք, այլ ևս կարիք չի լինի ոչ հերքումներ տպելու, և ոչ էլ վախենալու թէ ինչ է մտածում հասարակաց կարծիքը, կամ ինչ է ասում մամուլը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՌՈՒՍ ՄԱՐԴՈՒ ԿԱՐԾԻՔ

—

Պետերբուրգի «Новое Время» լրագրի յայտնի յօդուածի առիթով, որին արդէն մենք պատասխանեցինք, տեղական «Тифлисскій Листокъ» լրագրում, մի ռուս պարոն, Տ—եվ ստորագրութեամբ, զետեղել է մի վերին աստիճանի գեղեցիկ յօդուած: Առաջ ենք բերում այդ յօդուածի մեծ մասը թարգմանաբար:

«...Մենք մանրամասն չենք քննի յօդուածը, այլ կը սահմանափակվենք մի քանի ընդհանուր նկատողութիւններով գլխաւոր կէտերի մասին: Նախ և առաջ նկատենք, որ խարդախութիւնների առանձին դէպքերը փչել-ուռեցնել և դարձնել մի ազգային չարժում, հասարակ աւազակութեան մէջ տեսնել քաղաքական նպատակ—կարելի է միայն չափազանց կարճատեսութեան ժամանակ, կամ երբ դիտմամբ ցանկութիւն կայ այդպիսի գոյն տալ գործին: Մի խարդախ հայ կամ վրացի, ունենալով իր ձեռքին իշխանութիւն, յանցանք է գործում, ձգտելով իր սեփական շահին կամ հովանաւորելով մօտիկ մարդուն:—Ի՞նչ գործ ունի այդտեղ ազգութիւնը: Մինթէ մեր ռուսների մէջ քիչ կան այդպիսի խարդախներ և իրանց մերձաւորների հոգատարներ: Նկատված է, որ շահախնդիրները առհասարակ մեծ կօսմօպոլիտներ են: Նրանք խորութիւն չեն դնում ազգութիւնների մէջ. իրանցն է, թէ ուրիշինը—այդ մի և նոյնն է: Ով նրանց ճանապարհը փակում է, վայր կը գլորեն՝ երկար չը մտածելով: Եւ նրանք գոյութիւն ունեն ամեն ազգի մէջ, նոյն իսկ ամենալուսաւորվածների մէջ: Մի ազգութեան մասին դատելու, նրան արժանապէս գնահատելու համար, չէ կարելի վերցնել առանձին անձնաւորութիւններ, այլ ամբողջութիւնը, ստուար մասսան:

«Մօտ մի դար ժամանակամիջոցում ռուսաց զօրքերի շարքերում կռուել են ոչ սակաւաթիւ վրացի և հայ, իբրև ռուսահպատակներ: Նրանց մէջ եղել են և զօրապետներ և նրանցից ոչ ոք չէ արատաւորել իր անունը անարժան վարմունքով: Եթէ ռուսները Բաթումը առնելիս թափել են իրանց արիւնը, նրանց հետ միասին մի դրօշակի տակ թափվել է և վրացական ու հայկական արիւն: Այն ժամանակ ոչ ոքի խելքին չէր գայ ազգութիւն որոնել քաջ հանդիսացած և զոհված հերոսների մէջ. ինչու ուրեմն այդ անենք այժմ նուաճված հողը բաժանելու ժամանակ: Ի՞նչու դիտմամբ փակենք մեր աչքերը և չը տեսնենք ազգութիւնների լաւ կողմերը և ծառայութիւնները, և թմբուկներ զարկենք այնպիսի դէպքերի առիթով, որոնք չը նայելով իրանց անախորժ էութեան, կրում են մասնաւոր բնաւորութիւն: Եթէ վրացիները և հայերը երբ և իցէ նկատի են ունեցել ազգային շահեր, այդ եղել է միայն իրանց լեզուի և կրօնի աղատութեան վերաբերութեամբ. միայն այս բաներն նրանք առանձնապէս ձգտել են: Բայց մենք ռուսներս ինքներս կը դարձնէինք ատելութեամբ մեր երեսները նրանցից, եթէ նրանք չը գնահատէին այն, ինչ թանգ պէտք է լինի ամեն մի պատուաւոր մարդու համար: Իսկ ինչ վերաբերում է բոլոր մնացածներին, նրանք բոլորովին համերաշխ են ռուսների հետ, ընդունում են նրանց գերադասութիւնը, ուր նա կայ, հաճութեամբ իրանց շրջանն են մտցնում կուլտուրական ռուս մարդկանց, հաճութեամբ փոխ են առնում նրանցից գիտութիւններ, եթէ միայն այդ կուլտուրական մարդիկը չեն վերաբերվում նրանց գռեհկաբար, շատ բարձրից, չեն վիրաւորում en canaille, չեն չօշափում նրանց ազգային զգացումը, որ յատուկ է իւրաքանչիւր ազգի, ինչ աստիճանի վրա էլ նա գտնվում լինի:

«Ճշմարիտ ռուս հայրենասիրի պարտքն է ռուս կայսրութեան զանազան ազգութիւնների մէջ կապ և միութիւն պահպանել և ոչ թէ սերմանել խուլ թշնամութիւն, առիթներ տալ տրտնջալու անարդարութեան դէմ և խորութիւն դնել այնտեղ, ուր նա չը պէտք է լինի: Ընդհանուր սէր, հաւասարութիւն և եղբայրութիւն—ահա սկզբունքներ, որ դրել է մեր կառավարութիւնը. այս ոգով գործում է և բարձր իշխանութիւնը Կովկասում և միայն նեղ, կեղծ հայրենասէրներն են տեսնում այն, ինչ որ չը կայ և չէ կարող լինել. աննշան կայծը փչում, մեծացնում են ու դարձնում վտանգաւոր մի բոց, կուլի սերմ են ցանում այնտեղ, որտեղ պէտք է խաղաղութիւն և հանգստութիւն տիրեն:

«Այդպէս կասի իւրաքանչիւրը, ով լաւ է ճանաչում Վրաստանը, ուսումնասիրել է նրան տեղն ու տեղը և ոչ թէ հաղարաւոր վերստեր հեռու նստած՝ այն էլ լուրերի հիման վրա. նա, ով ապրել է վրացիների և հայերի մէջ և որի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻՑ

II

Ֆինլանդիայի լանդտագը բաղկանում է 4 դասակարգից՝ ազնուականներից, հոգևորականներից, որոնց հետ են և ուսումնականները, յետոյ քաղաքացիներից և վերջապէս գիւղականներից: Ուրբաթ, յունվարի 26-ին, (այստեղ նոր տօմարն է գործում) կը բացվի հանդիսաւոր կերպով Ֆինլանդիայի սահմանադրական պատգամաւորների ժողովը Հելսինգֆորսի մայր եկեղեցում, ուր վեց հազար անձինք կարող են տեղաւորվել, բայց շատ հաւանական է, որ հանդիսականների թիւը մէկ կամ երկու հազար լինի:

Բայց այսօր, յունվարի 25-ին, ընդունվեցան երեք դասակարգերը (ազնուականներն երէկ են ընդունվել) Ֆինլանդիայի ընդհանուր նահանգապետ գեներալ Հէյդէնից, որին պատգամաւորները մատուցանելով իրանց հաւատարիմ հպատակութեան հաւատիքն առ Նորին Կայսերական Մեծութիւնը, խնդրեցին իմանալ թէ ո՞ր օր կը բարեհաճի Նորին Կայսերական Մեծութիւնը որոշել լանդտագի բացումը կայսերական պալատի գահական դահլիճում (այստեղ մի պալատ կայ գահական դահլիճով):

Այսօր ընդունվելուց առաջ մի գործողութիւն ունէին կատարելու այդ երեք դասակարգերը. պէտք էր իրանցից ընտրվէին երեք բանախօսներ: Բանախօս նշանակելու այդ իրաւունքը Կայսրինն է, և Նորին Մեծութիւնը յանձնել էր ընդհանուր նահանգապետին այդ բանը կատարելը: Տեղիս պատգամաւորների պալատի առանձին մեծ դահլիճներում ժողովված և սպասող պատգամաւորներին ծրարներ հասան, որոնց մէջ այդ պաշտօնի անձինք յականէ յանուանէ որոշված էին: Սրանք համարվում են մի տեսակ նախագահներ իրանց դասակարգի:

Հոգևորականների բանախօսը արդէն ի պաշտօնէ որոշ է. դա Ֆինլանդիայի արքեպիսկոպոսն է՝ Ռէնվալ: Նա իր դասակարգին ասաց հետևեալը:

«Արժանապատիւ հոգևորական դասակարգ: Նորին Կայսերական Մեծութեան չնորհառատ հրամանով կրկին անգամ մի լանդտագ է ժողովված Ֆինլանդիայի համար: Ցիրաւի ծանր են մեր այժմեան ժամանակները. ծանր են նոյնպէս և Ֆինն ազգի համար, որքան էլ փոքր և սակաւաթիւ լինի նա: Ծանր են և այն խնդիրները, որ դրված են այն անձանց առաջ, որոնք օրէնքի հիման վրա յանձն են առել այս ազգի ներկայացուցիչները լինելու պատուաբեր, բայց միանգամայն և խիստ պատասխանատու պաշտօնը:

«Հաւատն խոհեմութիւն և բարեկիրթ չափաւորութիւն պէտք է արտափայլի այն հարցերի քննութեան ժամանակ, որոնք պատգամաւորներին կը ներկայացվեն: Մի այնպիսի հայրենասիրութիւն, որ չը գիտէ թէ ինչ է սակարկութիւն, մի հաւատարմութիւն առ իշխողը, որ ոչինչով չի սասանի, մի բարեխիղճ ուշադրութիւն և անընդհատ մտաբերութիւն այն կապերի, որոնցով մեր ազգը և մեր երկիրը կապված են, նախնամութեան խորհրդով, հզօր պետութեան հետ, պէտք է ոգևորէ մեր բոլոր խորհրդածութիւնները և որոշումները: Երբ որ այս յատկութիւնները մեզանում կը գործեն, այն ժամանակ մենք կարող ենք բարի յոյսով և խաղաղ վստահութեամբ նայել ղէպի ապագան, որ Աստուած պատրաստել է Ֆինն ազգի համար:

«Աստուած երեսպաշտ չէ. նա նոյնպէս երեսպաշտութիւն չի անի, նայելով թէ մի ազգ, մարդկային չափով չափելով՝ փոքր է թէ մեծ, ակար է թէ զօրաւոր: Գլխաւոր բանը այն է, որ չը խոտորի նրանից, որ ամեն ճշմարտութեան աղբիւրն է և ամեն արդարութեան պաշտպանը:

«Ես, որ այժմ խօսում եմ հոգևորական դասակարգի հետ, բաւական է որ լոկ մատնացոյց անելով՝ անուանեմ ինչ որ արդէն կրում եմ սրտումս: Ես այս մի քանի խօսքովս կը վերջացնեմ. Աստուծոյ չնորհքը և օրհնութիւնը թող լինի մեր ժողովի վրա»:

Քաղաքացիների պատգամաւորների բանախօս պ. Կուրտէնը իր պատգամակիցներին դիմից հետևեալ ճառով:

«Ես այս տարի էլ արժանացայ քաղաքացի դասակարգի բանախօսը լինելու պատուին. յանձն եմ առնում այդ պաշտօնը, որի պատասխանատուութիւնը լաւ գիտեմ: Ես գիտեմ, որ իմ ոյժը չի հաւանի, որպէս զի պաշտօնս այնպէս կատա-

համար իսկապէս թանգ են և ռուսական գործը, և ռուսական ժողովրդականութիւնը Կովկասի բնիկների մէջ»։

ԲԱՒԱԿԱՆ Է

Հրապարակախօսական պայքարը, գրականական վէճը ունեն իրանց էթիկան, որի սահմանից ոչ ոք չը պէտք է իրան թոյլ տայ դուրս գալու։ Մեր հակառակորդ մամուլը առաջին անգամը չէ, որ ընդունված սահմաններից դուրս է ցատկում դէպի անպիսի ասպարէզ, ուր կուելու հաճութիւն չի զգայ գրականութեան պատիւ ճանաչողը։

«Արձագանք» լրագիրը իր վերջին համարում խօսելով տեսուչ Փ. Վարդանեանի մասին, ջատագովելով նրան և յայտնելով, որ Վեհափառ Հայրիկը նրան իր բարեկամ է անուանել, աւելացնում է «Մշակի» խմբագրի հասցէին. «Մենք գիտենք, որ Հայրիկի բարեկամները ձեր բարեկամները չեն»։ Խնդրեմ ասեցէք, դա ինչ գրականական ձև է։ Ի՞նչ գործ ունի այստեղ Վեհափառ Հայրիկը։ Ի՞նչու էք տեղի անտեղի Հայրիկի անունը տալիս։ Ի՞նչ առնչութիւն կայ պ. Վարդանեանին քննադատելու և Վեհափառ Հայրիկի մէջ։ Ի՞նչու էք Վեհափառ Հայրիկի անունով աշխատում վարագոյրի տակ պահել մի խնդիր, որ գուցէ ինքն իրան պաշտպանվէր՝ քննութեան և մտքի փոխանակութեան բովքից անցնելով։

Ի՞նչու էք խաղում «Վեհափառ Հայրիկի բարեկամներ» խօսքերի հետ։ Դուք չարունակ յարձակումներ էք թոյլ տուել ձեզ անզուսպ և անպատկառ ձևով «Մշակի» խմբագրութեան անդամների վրա, որոնց ևս բարեկամներ է ճանաչել Վեհափառ Հայրիկը. բայց երբ և իցէ ձեզ ասել ենք, թէ յանուն Վեհափառ Հայրիկի թողէք մեզ հանգիստ։

Դեռ մի երկու ամիս առաջ «Արձագանքի» խմբագրութիւնը վէճի բռնվելով մեր մի թղթակցի հետ, յայտարարեց թէ սա պատրաստում է հակախրիմեանականութեան հոդ. իսկ այժմ թոյլ է տալիս մի ուրիշ, նոյն տեսակ վարմունք։

Ձեր այդ բոլոր արածները, համարելով վերին աստիճանի տգեղ, իբրև գրականական անթոյլատրելի ձև, տալիս ենք հետևեալ կարճ պատասխանը։

Մենք գիտենք մեր ճանապարհը և գնում ենք անշեղ այդ ճանապարհով։ «Մշակը» ունի սկզբունքներ, որոնց ծառայում ենք և ծառայելու ենք հաւատարիմ, որոնց համար չարունակելու ենք մեր քարոզը՝ անդադար կռիւ մղելով խոչնդոտ այժերի դէմ։ Առողջ հասարակական կարծիքը և ապագան կը լինեն մեր դատաւորները։ Ձեր բերանում խրիմեանական, հակախրիմեանական բառերը դաղափարներ չեն, այլ զէնքեր, որոնց անխիղճ և անբարեխիղճ գործ էք դնում։ Շարունակեցէք, բայց գիտացէք, որ ձեր դիմակները սկսել են բացվել և որ բառերի հետ հանաք անելը անպատիժ չէ անցնում։

Խօսք ունէք ասելու, ասեցէք։ Այդ ինչ ձեր են, որ դուք գործ էք դնում։ Մի կողմից երեխայական, միւս կողմից ագեղ վարմունքներով հանդէս գալով՝ դուք կարծում էք թէ կարողանում էք ծածկել ձեր բարոյական մանկութիւնը։

Բաւական է։

Վերջապէս ժամանակ է, որ սկսէք փոքր ի շատէ լուրջ վերաբերվել դէպի գրական խօսքը, դէպի մի զէնք, որ տրված է աւելի լաւ գործադրութեան համար, քան թէ դուք ընդունում էք։

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Յունվարի 15-ին

Ամսիս 15-ին այստեղ կատարվեց Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան տօնը։ Նախընթաց երեկոյեան Վեհափառ Կաթողիկոսը եկեղեցի իջաւ՝ շրջապատված հոգևորականներով, ճեմարանի աշակերտների և բազմաթիւ ժողովրդի ուղեկցութեամբ և ներկայ եղաւ հանդիսաւոր նախատօնաքին։ Շաբաթ օր, առաւօտեան ժամը 10-ին, պատարագից առաջ, մայր տաճարում, Իշման տեղի առաջ, Վեհափառ Հայրապետի, ամբողջ հոգևոր դասի, ճեմարանի աշակերտների և խուռն բազմութեան ներկայութեամբ կատարվեց հայրապետական մաղթանք, որը վերջանալուց յետոյ ճեմարանի լսարանի մի ուսանող ճառ կարդաց։ Մաղթանքից յետոյ բոլոր հոգևորականները մօտեցան, համբուրեցին Հայրապետի աջը և շնորհաւորեցին անուանակոչութեան տօնը։ Նոյն օրը հանդիսաւոր պատարագը կատարվեց ս. Յովհաննէս Մկրտչի սեղանի վրա. պատարագիչն էր Գրիգորիս եպիսկոպոս Գառնակերեան։ Պատարագից յետոյ Վեհարանում ընդունելութիւն եղաւ. Վեհափառին ներկայացան և տօնը շնորհաւորեցին ճեմարանի ուսուցչական խումբը տեսչի հետ, նոյնպէս Երևանի հասարակութեան կողմից այդ նպատակով եկած ներկայացուցիչները և ուրիշ շատերը։

Նոյն օրը Վանքի սեղանատանը հանդիսաւոր ճաշկերոյթ եղաւ Վեհափառի և բոլոր միաբանների ներկայութեամբ. հրաւիրված էին և ճեմարանի ուսուցիչները և զանազան կողմերից եկած հիւրերը։ Առաջին բաժակը ինքը Վեհափառն առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը, որ հանդիսականները յոտնկայս և «կեցցէ»-ներով ընդունեցին։ Ճեմարանի երգեցիկ խումբը երգեց «Տէր պահեա զԿայսրն մեր»։ Երկրորդ բաժակն առաջարկեց Էջմիածնի գաւառապետի օգնականը Վեհափառ Հայրապետի կենացը, որը յոտնկայս և «կեցցէ»-ներով ընդունվեց։ Երգեցիկ խումբը երգեց Ղ. Աղայեանցի շարադրած՝ Վեհափառի անուան «Թող բարձրացնի» երգը։ Երգեցողութիւնից յետոյ հայր Խորէն Ստեփանէն՝ տօնի առիթով մի գեղեցիկ առենաբանութիւն արեց։ Հայր Ստեփանէի այդ ճառը իր այն ճառերից մէկն էր, որոնցով վաղուց է ինչ նա, ամենայն իրաւամբ, վաստակել է պերճախօս առենաբանի հռչակ։ Իր այդ առենաբանութեան մէջ հայր Ստեփանէն գեղեցիկ կերպով ներկայացրեց չորս միլիոն ազգի այն գեղեցիկ ցանկութիւնները և յոյսերը, որոնց իրագործումը Վեհափառ Հայրապետից է սպասվում։ Ճառն ընդունվեց բուռն կեցցէներով և ծափահարութեամբ։ Ուշադրութեամբ լսելուց յետոյ, Վեհափառն ասաց մօտաւորապէս հետևեալը։— Ինձ որչափ և գովելու լինեն, որչափ և գովեստներ թափվեն վրաս, որչափ և ինձ ընդունակ համարեն այս և այն գործերը կատարելու, այս և այն ծրագիրներն իրագործելու, ինձ համար բոլորովին մի և նոյն է. իմ այժերս, իմ ընդունակութիւններս ամենից աւելի լաւ ես ինքս եմ ճանաչում և գիտեմ թէ ինչ կարող եմ կատարել և ինչ ոչ։ Սակայն պիտի ասեմ, որ յաջող, արդիւնաւէտ գործունէութիւնը կախված է այս սրբազանների և վարդապետների աջակցութիւնից. եթէ սրանք ինձ օգնեն, ձեռք տան, կարելի կը լինի շատ բան անել, իսկ եթէ ձեռները կը ծալեն, յետ կը քաշվեն և կը մեկուսանան, այն ժամանակ մենակ ես ինչ կարող եմ անել։ Առաջարկում եմ համայն միաբանութեան կենացը։

Երգեցիկ խումբը երգեց. «Տէր կեցո զՀայս», և ճաշը վերջանալով, Վեհափառը միաբանութեան և բազմութեան ուղեկցութեամբ վեհարան գնաց։

Շ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունվարի 18-ին

Մեր հասարակական ժողովարանի աւագների ընտրութիւնը կատարվելուց յետոյ, մի խումբ մարդիք, այն կարծիքի լինելով, որ այդ ընտրութիւնը անկանոն է (ընտրված են 6 հայեր ու փոխ-նահանգապետ իշ. Նակաշիձէ) բողոքում են, որ ընտրութիւնը բեկանվի։ Զարմանալին այն է որ այդ բողոքագրին ստորագրել է մի ընտրված աւագ, որը այժմ վարում է այդ պաշտօնը։ Հետաքրքիր է իմանալ. եթէ պարոնի կարծիքով ընտրութիւնը անկանոն է, ապա ինչու՞ ինքը վարում է այդ պաշտօնը։

Ամսիս 13-ին այստեղից ճանապարհ ընկաւ դէպի Թիֆլիս բժ. Արտեմեանը։ Նա, որպէս Պոլտավեան գնդի բժիշկ, եկաւ այստեղ անցեալ տարվայ դեկտեմբեր ամսին, և իր պարզ, հասկրելի ընտանութիւնով այս կարճ ժամանակում այնպէս գրաւեց այստեղի հասարակութիւնը, որ բոլորը ցաւում էին նրա հեռանալու պատճառով։ Բժ. Արտեմեանին, բացի մասնաւոր ընտանիքներում պատիւ տալը, տեղիս երկու սեռի երիտասարդներ՝ մօտ 25 հոգի, մի ճաշկերոյթ տուին ամսիս 10-ին։ Ճանապարհ ընկնելու օրը, մինչև էյլար-կայարանը մի քանի անձինք ճանապարհ դրին բժշկին։ Բժիշկ Արտեմեանին սկզբում տեղափոխել էին Գըրոզնոյ և ապա Վարշավա, լեհական նահանգներում գտնվող կօզակների խմբի մէջ. բայց նա մի քանի հանգամանքներով չը կարողանալով այդքան հեռու գնալ, թողեց պաշտօնը, որպէս զի կամ Թիֆլիսում կամ Բաքումում կարողանայ մասնաւոր պրակտիկայով պարապելու։

Այժմ այստեղ ցորենը բաւական էժանացել է. խալվարը 40—42 ռուբլի. այդ հաշուով, ինչպէս և դուման իր մի յանձնաժողովի ձեռքով փորձել է, թխած հացի գինը՝ լիտրը 36 կոպէկից չը պէտք է անցնի, այն ինչ ահա երեք ամիս է թխած հացի տակսան 44—46 կոպէկ է, այսինքն իսկականից 8—10 կոպէկ աւելի։ Հաշուելով որ օրական այստեղ ծախվում է 30 խալվար կամ 3000 լիտր թխած հաց, դուրս է գալիս, որ Երևանի ժողովուրդը օրական 300 ռուբլի, կամ երեք ամսում աւելի քան 25,000 ռուբլի փող աւել էր վճարել մեր հացթուխներին։ Ցաւալին այն չէ, որ հացթուխը օգտվում է այդ թանգութիւնից, այլ այն է, որ երբ որ մի հացթուխ խնդիր է տալիս մեր ուշադրութիւնը բարձրացնում է մի ազգ, իսկ մեզքը՝ ժողովուրդի կորուստ է»։

«Պատուարժան դասակարգակիցներ. Արտանց ողջունում եմ ձեզ իբրև Ֆինլանդիայի երկրագործ ժողովրդի բարեմիտ ներկայացուցիչներին, և խնդրում եմ խոնարհաբար, որ բարեհաճէք ինձ վրա համբերութեամբ նայել՝ իբրև մեր դասակարգի բանախօսի վրա այստեղ, ուր ցարդ իմ նախորդս էր նստում գերազանց կարողութիւնով, որի հետ ես ինձ բաղդադել չեմ համարձակվի։

«Հաւատարիմ մեր Կայսրին, հաւատարիմ մեր հայրերի երկրին, կարողանանք կատարել խաղաղութեամբ մեր յանձն առած պաշտօնը, որ հասնենք մեր նպատակին, որ է Աստուծոյ պատիւը և մեր երկրի բարիքը։ Մեր աշխատանքի մէջ պէտք է գործադրենք մեր ամենօրեայ աղօթքը. «եկեսցէ արքայութիւն քո»։

Հաղորդելով ձեզ այդ ճառերը, որից կարող էք դաղափար կազմել ֆինլանդական ժողովրդի ներկայացուցիչների մտքերի մասին, և թէ նրանք ինչպէս են խօսում՝ այժմեան փափուկ պայմանների մէջ, միւս անգամ կանդ կառնենք լանդտագի պարապմունքների գլխաւոր կէտերի վրա։

Ա. Ա.

ռեմ, ինչպէս մեր դասակարգն է պահանջում, և ինչպէս որ ես ինքս կը ցանկանայի, բայց ես կարող եմ երաշխաւորել, որ բարի կամք իմ մէջ պակաս չի լինի։ Սակայն որպէս զի որ և է կերպով համապատասխան գտնվեմ այն պահանջներին, որ Ֆինլանդիայի քաղաքացի դասակարգը իրաւունք ունի իր բանախօսից սպասելու, ես կարօտ եմ իմ պատգամակից եղբայրների վստահութեան և որը ես այժմ խոնարհաբար խնդրում եմ։ Շատ լուսաւոր չեն այն հանգամանքները, որոնց մէջ մենք ժողովված ենք այժմ։ Ընդհակառակն, մեզանից իւրաքանչիւրի համար հայրենիքի ապագան մռայլ է երևում։ Սակայն սա չը պիտի ընկճէ մեր գործելու զուարթութիւնը և առաջադիմելու վստահութիւնը։ Ես համոզված եմ, որ ամենքս էլ այս բոպէիս վճռել ենք, որ առանց մեր անձնական հանգստութիւնը կամ անձնական շահը ի նկատի առնելու՝ մեր բոլոր այժերը նուիրենք հայրենիքի ծառայութեանը, նրա համար գործենք, և այդ արդէն մեծ շահ է, որովհետև անխոնջ աշխատանքը ընդհանրապէս առաջադիմութիւն է ծնում, թէկուզ արտաքին հանգամանքները ճնշող և անաջող լինեն»։

Գիւղացի դասակարգի բանախօսը՝ Կարլ Վէրլի, գիւղացի երկրագործը, իր գիւղացի պատգամակիցներին ուղղեց հետևեալ խօսքերը.

«Պատուարժան գիւղացի դասակարգ. կանչված լինելով մեր ազգված Կայսրի կողմից, մենք կրկին ժողովվել ենք օրինաւոր լանդտագի, որպէս զի մեր թանգագին հայրենիքին վերաբերեալ գործերի մասին խորհենք և որոշումներ տանք։ Նորին գերազանցութիւնը, երկրիս ընդհանուր նահանգապետը, հիմնվելով այն իրաւունքի վրա, որ Կայսերական շնորհով նրան տրված է, ինձ գիւղացի դասակարգի բանախօս է նշանակել։ Ես գիտեմ իմ այժերի թուլութիւնը այսպիսի մի ծանր պաշտօնի համար. և եթէ ես համոզված չը լինէի, թէ սա էլ այն Տիրոջ կամքն է, որ զօրաւոր է տկարների մէջ, ես պէտք է մեծ վհատութիւնով ստանձնէի այս պաշտօնը։ Բայց ապաւինելով Ամենակարողի հզօր աջակցութեանը՝ ես ընդունեցի այդ յանձնարարութիւնը և խնդրում եմ ինձ ձեր վստահութեան արժանի համարելու պատիւն արժանացրէք։

«Երանի այն ազգին, որի Աստուածը Եհովան է, այն ազգին, որ նա իրան համար ժառանգութիւն է ընտրել»։ Ֆինն ազգն էլ է կարող այդ ճշմարտութիւնն իրան վերագրել. և որչափ որ նա ամուր կը բռնի այդ ճշմարտութիւնը, այնքան էլ նրա կեանքն ապահով կը լինի։ Քանի անգամ որ Տիրոջ ժողովուրդը՝ Իսրայէլը դադարեց դաւանել Եհովային՝ իբրև իր Աստուածն և դարձաւ դէպի կուռքերը, միշտ ստիպվեց բռնակալների ձեռքի տակ ճնշվել։

«Մեր թանգագին հաւատը և մեր սահմանադրական կառավարութիւնը մենք ժառանգել ենք մեր հայրերից. մենք պէտք է պաշտպանենք դրանց և արծարծենք բարձրագոյն ճշմարտութեան լոյսով, որպէս զի միշտ աւելի կատարեալ կերպով փայլեն Աստուծոյ փառքի և մեր հայրենիքի բարեկեցութեան համար։ Ահա այդ նպատակն է, որի համար մենք այս անգամ էլ ժողովվել ենք մեր հայրենիքի մայրաքաղաքում։ Թէպէտ և գիւղացի դասակարգի անդամների մեծագոյն մասը իր ծանր աշխատանքի պատճառով չէ կարողացել բարձրագոյն ուսում ձեռք բերել, որ կարողանար խոր գիտութիւն և փայլուն յատկութիւններ ցոյց տալ, բայց և այնպէս մեր այս դասակարգի ներկայացուցիչ լինելը՝ խիստ մեծ նշանակութիւն ունի։ Ուրեմն ճանաչենք մեր ամենաթանգ պարտականութիւնը և մեր այս դիրքը պահենք օրէնսդրութեան սուրբ սահմանների մէջ, յիշելով որ «արդարութիւնը բարձրացնում է մի ազգ, իսկ մեղքը՝ ժողովուրդի կորուստ է»։

«Պատուարժան դասակարգակիցներ. Արտանց խնդրում եմ ձեզ իբրև Ֆինլանդիայի երկրագործ ժողովրդի բարեմիտ ներկայացուցիչներին, և խնդրում եմ խոնարհաբար, որ բարեհաճէք ինձ վրա համբերութեամբ նայել՝ իբրև մեր դասակարգի բանախօսի վրա այստեղ, ուր ցարդ իմ նախորդս էր նստում գերազանց կարողութիւնով, որի հետ ես ինձ բաղդադել չեմ համարձակվի։

«Հաւատարիմ մեր Կայսրին, հաւատարիմ մեր հայրերի երկրին, կարողանանք կատարել խաղաղութեամբ մեր յանձն առած պաշտօնը, որ հասնենք մեր նպատակին, որ է Աստուծոյ պատիւը և մեր երկրի բարիքը։ Մեր աշխատանքի մէջ պէտք է գործադրենք մեր ամենօրեայ աղօթքը. «եկեսցէ արքայութիւն քո»։

Հաղորդելով ձեզ այդ ճառերը, որից կարող էք դաղափար կազմել ֆինլանդական ժողովրդի ներկայացուցիչների մտքերի մասին, և թէ նրանք ինչպէս են խօսում՝ այժմեան փափուկ պայմանների մէջ, միւս անգամ կանդ կառնենք լանդտագի պարապմունքների գլխաւոր կէտերի վրա։

Ա. Ա.

դամներին, իրանց ապօրինի և անհաւատարիմ գործողութիւնների համար այլ ևս անկարելի է թողնել այդ պաշտօնի մէջ, այդ պատճառով խնդրել սինոդի տնօրինութիւնը՝ արձակելու նրանց այդ պաշտօնից։

Այդ տեսակ գործեր կատարողների պաշտպանները, հրապարակ դուրս գալով, հարց դրեցին, թէ ինչ զեղծումներ կան, և ինչ մերկացումներ եմ արել ես։ Ահա, կարդացէք և ճանաչեցէք։

Սա իմ վերջին խօսքն է։ Մնացած զեղծումների մասին պատրաստում եմ տեղեկագիր սինոդին ներկայացնելու համար։

Արսէն աբեղայ Ղլտճեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի առողջանալու պատճառով, շաբաթ, յունվարի 22-ին, Վրաստանի էկզարխի եկեղեցում, համայն հոգևորականութեան ներկայութեամբ, մաղթանք կատարվեց՝ մաղթելով երկար տարիներ Թագաւոր Կայսրին, Թագուհի Կայսրուհուն, Թագաժառանգ Ցէսարեվիչին և ամբողջ Թագաւորող Տանը։ Մաղթանքին ներկայ էին՝ Կովկասի կառավարչապետի օգնական կոմս Ցատիշչեվ, գեներալները, զինուորական և քաղաքացիական վարչութիւնների բարձր պաշտօնեաները, քաղաքային և հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչները և բազմաթիւ աղօթողներ։

—

Թէհրանում այս տարվայ սկզբից հրատարակվող հայերէն «Շաւիղ» շաբաթաթերթի № 1-ը ստացվեց արդէն մեր խմբագրութեան մէջ։ Շաբաթաթերթը իր առաջնորդող յօդուածում, մատնացոյց անելով այն հանգամանքի վրա, որ Պարսկաստանի և Ռուսաստանի հայ ժողովուրդների բարոյական և մտաւոր կեանքի մէջ արդէն առնչութիւն է հաստատված, յայտնում է, որ իր նպատակը պիտի լինի մի կողմից այդ առնչութեան կապը հաստատ պահել, իսկ միւս կողմից, գլխաւորապէս մշակել տեղական խնդիրները և Պարսկաստանի զանազան անկիւններում ցրված հայերի մէջ յարաբերութեան կապը ուժեղացնել։ «Մենք յանդգնութիւն չունենք, ասում է շաբաթաթերթը, ժողովրդական կեանքի առաջնորդներ հանդիսանալ և ղեկավարել նրան», և բացատրում է, որ նա պիտի աշխատէ միայն առողջ հասարակական կարծիք ստեղծելու և տեղական խնդիրները լուսաբանելու։ Մի այսպիսի համեստ ծրագրով գործող թերթ աջողութիւն գտնելու ամեն հաւանականութիւն ունի։ Ընդհանրապէս՝ շաբաթաթերթը լաւ տպաւորութիւն է թողնում։ Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն։

—

Մեզ հաղորդում են, որ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան օգտին նշանակված պարահանդէսը, որ տեղի պէտք է ունենար ամսիս 30-ին, յետաձգված է և տեղի կունենայ փետրվարի 6-ին Թիֆլիսի Ժողովարանում։

—

Ալէքսանդրօպոլի խնտելիգենցիան ձեռնարկել է մի վերին աստիճանի համակրելի գործի—հիմնել էժանագին ճաշարան՝ աղքատների և սովեալների համար։ Մեզ հաղորդում են այդ առիթով Ալէքսանդրօպոլից հետևեալը. «Մտադրութիւն կայ բարեկենդանից առաջ մի ներկայացում էլ տալ, հանդերձ պարահանդէսով, յօդուտ Բարեգործական ընկերութեան նախաձեռնութեամբ բացվելիք էժանագին ճաշարանի»։

—

Թէհրանից մի պարոն, որ մտիկ ծանօթ է պարսկահայերին, դիմելով մեր խմբագրութեան մի նամակով՝ դառն կերպով գանգատվում է պարսկահայերի դպրոցական և եկեղեցական գործերի դրութեան մասին։ Նամակագիրը այն կարծիքի է, որ եթէ կովկասեան հայոց մամուլը անաչառ կերպով նայի ու քննադատի պարսկահայերի գործերը, դրանք կանոնաւոր ուղղութիւն կը ստանան։

—

Մարդասիրական ընկերութեան խորհուրդը խնդրում է տպագրել հետևեալը. «Համաձայն բարձրագոյն հաստատված՝ Բագուի Մարդասիրական ընկերութեան կանոնադրութեան 17 և 26 յօդուածների, ներկայ յունվարի 29-ին, շաբաթ օրը, երեկոյեան 7 ժամին, ընկերութեան Նորակառոյց շինութեան մեծ դահլիճում կը կայանայ տարեկան ընդհանուր ժողով, ուր կը քննվեն անցեալ 1893 թ. դրամական հաշիւները, կը քննվի ու կը հաստատվի ներկայ 1894 թ. համար խորհրդի կազմած նախահաշիւը, կը վճռվեն ընթացիկ գործեր և ապա կընտրվեն երեք տարի ժամանակով խորհրդի նախագահ և նոր անդամներ՝ ընկերութեան գործերը կառավարելու համար»։

—

Երկրագործութեան մինիստրութեանը ներկայացրած է Խարկովում հիմնելիք բարձրագոյն գիւղատնտեսական ճեմարանի ծրագիրը՝ քննութեան համար։

—

Անդրկովկասեան երկաթուղու Սուպսա և Ջումատի կայարանների մէջ եղած տարաձութեան վրա յունվարի 21-ին գնացքի խորտակումն է տեղի ունեցել։ Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը Սուպսա կայարանից, յունվարի 21-ին, հեռևեալ հեռագիրն է ստացել երեկոյեան 9 ժ. 3 րոպէին։ «Սաստիկ քամու պատճառով, Սուպսա կայարանից 4 վագոններ գնացին, որոնց ընդհարվեց Թիֆլիսից Բաթում գնացող № 2 մարդատար գնացքը։ 47 վերստի վրա, այդ ընդհարումից 2 վագոններ դուրս եկան գծից։ Շոգեմեքենան այրվում է։ Ճանապարհորդների մէջ վիրաւորվածներ կան, որոնց թիւը դեռ անյայտ է։ Սպանվածներ չը կան»։ Նոյն երեկոյեան 11 ժամին հեռագրում են. «Ճանապարհորդները, իրանց ցանկութեան համաձայն, փոխադրված են Սուպսա՝ ապրանքատար վագոններով»։

—

Մտադրութիւն կայ յուլիսի 1-ից, ինչպէս հաղորդում է «Кавказъ» լրագիրը, քաղաքային պարզ ինքնավարութիւն մացնել Թիֆլիսի նահանգի գաւառական քաղաքներում։

—

Կիրակի, յունվարի 23-ին, նշանակված էին Յովնանեան-Մարիամեան օրիորդաց դպրոցի հոգաբարձական պատգամաւորների ընտրութիւնները՝ Վանքի, Մողնու և Բեթղեհեմի եկեղեցիներում։ Վանքի եկեղեցում ընտրվել են՝ պ.պ. Ց. Խատիսեան, Գ. Սունդուկեանց, Ի. Բուդղանեան և Ա. Բաբանեան. Բեթղեհէմի եկեղեցում՝ պ. պ. Ց. Կուկուջանեան, Կ. Ալիխանեան, Յ. Խուդաղեան, Ն. Խարովեան, իսկ Մողնու եկեղեցում ընտրութիւններ չը կայացան, որովհետև այդ եկեղեցու բոլոր քահանաները հրաւէրներ չեն եղել ուղարկած ծխականներին, և այդ պատճառով այդ եկեղեցում ընտրութիւնը յետաձգվել է մինչև միւս կիրակի։

—

Թէհրանի «Շաւիղ» շաբաթաթերթը հաղորդում է, որ այս յունվար ամսին լոյս պիտի տեսնէ Թէհրանում ֆրանսերէն և պարսկերէն լեզուով մի նոր շաբաթաթերթ։

—

Հետևեալ անախորժ տողերն են գրում մեզ Ախալցխայից. «Մեծապատիւ մուրացկանները այստեղ էլ երևացին։ Ահա մի քանի օր է, որ այդ մուրացկանները փողոցէ փողոց, խանութէ խանութ ընկած կատարելապէս զզուեցնում են, և այդ էլ յանուն եկեղեցու, յանուն աղքի, յանուն մամուլի։ Զը նայելով որ շատերից յանդիմանվում են, անարգվում, մերժումն ստանում, բայց և այնպէս այդ մեծապատիւ մուրացկանները, երեսները պնդացնելով, սև ձէթի նման կպչում են մարդկանց օձիքից և փող կորզում։ Անցեալ օրը այդ մուրացկանները գնում են մի արհեստաւորի խանութ և իրանց միայն յատուկ ձևով ողորմութիւն խնդրում, սակայն մերժումն ստանալով հեռանում են։ Փորձում են երկրորդ և երրորդ անգամ, վերջապէս յանդիմանութիւն ստանալուց և անարգվելուց յետոյ, արհեստաւորը ստիպված է լինում մի քան տալ, որ ազատվի։ Շատերն էլ մերժում են՝ ասելով՝ «աղքատը շաբաթ օրը կը գայ» և ազգային մուրացկանները մեծ համբերութեամբ սպասում են շաբաթ օրվան։ Երբէք և ոչ մի ժամանակ մամուլի անունով այսպիսի գծուծ մուրացկանութիւն չէ եղել, ինչպէս այժմ։ Հասարակութիւնը վրդովված է»։

—

Մեր քաղաքն է եկել ձեռնածու Բօքերտ Լէնց, և հինգշաբթի, յունվարի 27-ին, Բանկի թատրոնում մի ներկայացում է տալու։

—

Մեզ ուղարկված է հետևեալ արդարացի նկատողութիւնը տպագրելու՝ Նոր-Նախիջևանից. «Նորերս այստեղ էր եկել մի շրջիկ ագենտ։ Պարոնը «Արձագանքի» համար բաժանորդներ է հաւաքում, և պտտելով շատ քաղաքներ՝ հասել է այստեղ։ Բացի այդ յանձնարարութիւնը կատարելուց, այդ պարոնը, ինչպէս պատմում են ականատեսները, անդադար հայոց կաթողիկոսի անունից է խօսում, աշխատելով հաւատացնել միամիտներին, որ մտիկ կապեր ունի վեհարանի հետ... Ո՞վ է այդ մարդը, ո՞ւմ կողմից է եկել, ո՞ւր է գնում,—մարդ չէ կարողանում հասկանալ»։

—

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Մանկավարժ Մանդինեանը վերջին օրերում աշակերտական մի այսպիսի ճանապարհորդութիւն կատարել տուեց, որ ոչ մի մանկավարժ իր օրում չէ կատարել։ Ծննդեան տօների երրորդ օրը, թեմական դպրոցից մի քանի ուսուցիչներ՝ մինը համալսարանական, հետը մի այլ ուսուցիչ և մի վերակացու, և 5 ու 6-րդ դասարանցի աշակերտներից թւով մօտ 20 հոգի, դեռ ևս Երևանում չը տեսնված այս սառնամանիքին ամբողջ 18 վերստ ճանապարհ անցնելով, այն էլ ոտով, գնացին Էջմիածին, շնորհաւորելու Վեհափառին Ծննդեան տօնը։ Վեհափառը, զարմանալով դրանց խելքի վրա, հրամայում է վանքի ֆուրգոնը լծել և առաջարկում է այդ ճըդնաւորներին՝ ֆուրգոնով գնալ։ Ենթադրենք, որ ուսուցիչը աշակերտի համար հեղինակութիւն է և վերջինը ամեն դժուարութիւն յանձն կառնի ի պատիւ ուսուցչի, բայց միթէ չը պիտի խնայել, այն էլ չքաւոր աշակերտին, որը ոչ կրկնակոշիկ ունի և ոչ վերարկու, և եթէ այդպիսի ճանապարհորդութիւնից մէկը կամ երկուսը հիւանդանան՝ նրանց ծնողները մինչև անգամ միջոց չունեն բժշկին դիմելու։ Եթէ պ. Մանդինեան ցանկութիւն ունի իր զգացմունքները արտայայտել, կարող է ոտով ոչ թէ Էջմիածին գնալ, այլ և աւելի հեռու. բայց ի սէր Աստուծոյ, այս ցրտերին այդ խեղճ աշակերտներին խնայեցէք։ Աշակերտների հետ այդպէս վարվելը ոչ եւրօպացի մանկավարժներից սովորեցէք»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Անցեալ դեկտեմբերի 26-ին, կիրակի օր, ուսուցիչների նախաձեռնութեամբ և հասարակութեան մասնակցութեամբ, կատարվեց անմահ Գրիգոր Արծրունու յիշատակին հոգեհանգիստ։ Պատարագին երգում էին երկսեռ դպրոցների աշակերտները և աշակերտուհիները, մասնակցութեամբ արձակուրդի պատճառով այստեղ հիւր եկած՝ ճեմարանցի աշակերտների։ Եկեղեցում մեծ թւով բազմութիւն կար, որ մնաց մինչև հոգեհանգստի վերջը. դիազարդը շրջապատել էին երկսեռ դպրոցների սաներն ու սանուհիները իրանց ուսուցիչներով։ Պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստը։ Ուսուցիչ Բ. Մատթէոսեան մի կարճ ճառով բացատրեց Արծրունու մեծ նշանակութիւնը, նրա արած գործերը և ուղղութիւնը»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Յունվարի 15-ին, Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան առիթով, հայոց դպրոցն արձակված էր. հասարակութիւնը շնորհաւորական հեռագիր ուղարկեց Վեհափառին. նոյն օրը պատարագին կարդացվեց Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը։ Պատարագին ներկայ էին՝ երկսեռ դպրոցի սաները իրանց ուսուցիչներով և մեծ բազմութիւն։ Միւս օրը, յունվարի 16-ին, կատարվեց դպրոցի դահլիճում հոգաբարձական ընտրութիւնը։ Երկար վիճաբանութեան առարկայ դարձան՝ ընտրութեան ձևը և թէ որոնք են համարվում ծխականներ։ Ընտրող ծխականների թիւն էր 42։ Ընտրվեցին հոգաբարձու՝ պ. պ. Գ. Դանիէլբէկեան և Ջում. Բարսեղեան, անձնափոխանորդներ՝ պ. պ. Մ. Ամիրջանեան և Ա. Բուղդանեան։ Նորընտիր հոգաբարձութիւնը մի մեծ գործ կատարած կը լինի, եթէ աշխատի աջողեցնելու մի յարմար շինութիւն կառուցանել դպրոցի համար, քանի որ այժմեան շինութիւնը շատ անյարմար է առողջապահական տեսակետից»։

—

ԱՂԲՈՒԼԱՂԻՑ մեզ գրում են. «Մեր նոր բացված ուսումնարանի հոգաբարձութիւնը կազմված է այնպիսի անձերից, որոնք ոչ մի արժանաւորութիւն չունեն այդ պաշտօնը ստանձնելու համար. հայերէն գրել գոնէ իմանային—էլի մի բան է։ Երբ որ տնտես ու գանձապահ-հոգաբարձուն յիշեցնում են ուսումնարանի կարևոր պէտքերի մասին, նա պատասխանում է թէ՝ ժամանակ չունեմ, գործեր ունեմ։ Երեք երիտասարդներ՝ Ծննդեանը «աւետիս» ման եկան և յօգուտ ուսումնարանի գրադարանի հաւաքեցին 20 ռուբլի։»

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Ամսիս 10-ին թոքերի բորբոքումից մեռաւ տեղիս հարուստ դասակարգին պատկանող պ. Ցարութիւն Բուդումեանցը։ Հանգուցեալի յիշատակը յարգելու համար նրա եղբայրները և որդիքը նուիրեցին՝ յօդուտ տեղիս հայոց երկսեռ ուսումնարանի 200 ռուբլի՝ հանգուցեալի անունով մի որդեղիր պահելու, Սևանի վանքին նուիրեցին տարեկան մի խալվար (30 պուդ) ցորեն, քանի որ իրանց՝ Բուդումեանցների սեփական ջրաղացը բանելիս կը լինի և մի աւելի մեծ բարեգործութիւն, որի մասին ծխական Եղիազար քահանայ Տէր-Միքայէլեանցը իր տուած քարոզում ասաց, թէ ապագայում կը յայտնվի. շատերը կարծում են, որ այդ բարեգործութիւնը Ս. Կարապետ եկեղեցու համար զանգակատուն կառուցանելն է։ Դագաղը եկեղեցուց դուրս բերելու ժամանակ ուսուցիչ Փիլօեանցը բաւական լաւ ատենաբանութիւն արեց, աշխարհիս երջանկութիւնը բարեգործութեան մէջ համարելով։ Հանգուցեալին յուղարկաւորեց մեծ բազմութիւն. նաև շատ աղքատներ էին եկել թէ քաղաքից և թէ հարևան գիւղերից, որոնց կերակրելու համար մեծ պատրաստութիւն էին տեսել»։

—

ԳԵՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Բագուաբնակ դրամատէր պ. Առաքել Ծատուրեանը որոշել է իր ծննդավայր Քարահունջ գիւղում մի դպրոց կառուցանելու, և այդ մասին արդէն գրել է գիւղում բնակվող իր եղբօրը՝ դպրոցի համար գետին գնելու և հարկաւոր պատրաստութիւնները տեսնելու՝ գարնանը գործը սկսելու համար։ Այդ առիթով գիւղացիները, պ. Ծատուրեանին իրանց շնորհակալութիւնը յայտնելուց յետոյ, մի և նոյն ժամանակ որոշում են ամեն տեսակ գիւրութիւն ընծայելու նրան դպրոցի շինութեան ժամանակ, այն է քարը, աւազը ձրի պատրաստելու, փայտեղէնը, կիրը իրանց անասուններով կրելու և շինութեան ժամանակ էլ ձրի մշակութիւն անելու. իսկ մի երիտասարդ արհեստաւոր, Մատթէոս Սևիեան աղգանունով, իր կողմից նուիրում է մօտ 300 քառակուսի սաժէն տարածութիւն ունեցող մի գետին 400—500 ռուբլի արժողութեամբ։ Գիւղում բացի այդ գետնից չը կայ ուրիշ յարմարագոյն տեղ դպրոցի շէնքի համար։ Թէև պ. Ծատուրեանի համար մեծ բան չէ մի քանի հարիւր կամ հազար ռուբլի վճարել դպրոցի համար տեղ ձեռք բերելու և այլ պարագաների համար, բայց գիւղացիների մխիթարութիւնը և եռանդոտ վարմունքը նոյնպէս փոքր բան չէ և անշուշտ պէտք է շատ ուրախացնի պ. Ծատուրեանին և խրախուսի նրան իր որոշումը շուտով ի կատար ածելու։ Գիւղացիների այս նուիրաբերութիւնը պատիւ է բերում նրանց և ցոյց է տալիս թէ դպրոցական գործը որքան հասունացած է այդ գիւղում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

—

Ի. Գերդը, նորերս վերադառնալով Ամերիկայից, կարդացել է Մոսկվայում մի դեկուցում Ամերիկայի կրթական գործի մասին։ Պարոնը ութը ամիս շարունակ մնալով Չիկագոյում և ընտրված լինելով ցուցահանդիսի մանկավարժական բաժնի գնահատողներից մէկը, կարողացել է ի մօտոյ ծանօթանալ Ամերիկայի կրթական գործին։ Առաջ ենք բերում այն ընդհանուր եզրակացութիւնը, որին նա եկել է իր ուսումնասիրութիւնից յետոյ։

Ամերիկան թէև չունի բազմադարեան կեանք, ինչպէս Եւրօպան, այնու ամենայնիւ կարողացել ստեղծել մանուկների կրթութեան մի ուսանելի և բնաորոշ սիստեմ։ Ընտանիքը վերաբերվում է մանուկներին սիրով և գգուանքով և մի և նոյն ժամանակ ոչ միայն երես չէ տալիս, այլ աջող կերպով ընտելացնում է նրանց արդէն փոքր հասակից ինքնուրոյնութեան և ինքնագործունէութեան։ Մինչդեռ մեզանում համարում են մանուկին, իբրև մի բուն ամեն չարութեան և վատ հակումների և աշխատելով արմատախիլ անել այդ չարը և վատը՝ բոլորովին կոտրում են մանուկի բնութիւնը, այնտեղ՝ Ամերիկայում գլխաւոր ուշադրութիւնը դարձրել են բոլոր այն լաւ կողմերի վրա, որ կան մարդկային բնութեան մէջ, հաւատալով, որ վատը ապագայում ինքն իրան կը խեղդվի և կը չքանայ։ Եւ հետևանքը ցոյց է տալիս, որ այնտեղ մանուկները, համեմատած մերին-

ների հետ, ճշմարտասէր, սրամիտ և խելամուտ են։ Դպրոցը, ընտանիքը այնտեղ միմեանց չեն հակասում։ Դպրոցը չէ փչացնում մանուկին ֆիզիկապէս, որովհետև ֆիզիկական դաստիարակութեանն այնտեղ մեծ տեղ է տուած։ Դպրոցում նախ և առաջ ընտելացնում են աշխատանքի և ինքնագործունէութեան, կանոնաւոր, տրամաբանական մտածողութեան, պատասխանների պարզ և ճիշդ ձևակերպութեան և ընդհանրապէս աշխատում են աղդել խելքի վրա, և ոչ յիշողութեան, չեն չարչարում մանր մունր բաներով, այլ սովորեցնում են հիմնաւորը և հիմնաւորապէս։ Ասել պէտք չէ, որ կրթութեան համար ոչ մի ծախք չեն խնայում։ Միայն Չիկագո քաղաքը կրթութեան վրա ծախսում է ոչ պակաս, քան մեր լուսաւորութեան մինիստրութիւնը ամբողջ Ռուսաստանի վրա։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինում լուր է տարածվել, որ Հէրբէլտ Բիսմարկ Հռօմի դեսպան է նշանակվում։

—Բերլինից մայրաքաղաքի լրագիրներին հեռագրում են, որ երբ իշխան Բիսմարկ դուրս եկաւ երկաթուղու վագոնից, կայարանում նրա համար պատրաստ էին բաց և փակ պալատական կառքեր, բայց նա ընտրեց փակ կառք։ Երբ պալատը գնաց, ըստ սովորութեան, նա կամենում էր համբուրել կայսրի ձեռքը, բայց վերջինը թոյլ չը տուեց, գրկեց և համբուրեց նրան։ Ուշադրութեան արժանի էր այն հանդամանքը, որ իշխան Բիսմարկին դիմաւորող բազմաթիւ հասարակութեան մէջ բացակայում էին բանւորները։ Կայսրը խուսափում էր քաղաքականութեան մասին խօսելուց իշխանի հետ։

—Սերբիական նոր մինիստր-նախագահ Սիմիչ մեծ յարդանք է վայելում սերբիական բոլոր կուսակցութիւնների կողմից։ Նա ծագումով Սերբիայի ամենայայտնի և հարուստ ընտանիքներից մէկին է պատկանում։ Սիմիչ մի քանի տարի դեսպան է եղել Պետերբուրգում և Վիէննայում։ Դա մի շատ կրթված և համակրելի սերբերից մէկն է։

—Բերլինի անկախ լրագիրները, խօսելով Վիլհէլմ կայսրի և իշխան Բիսմարկի հաշտութեան մասին, ոչինչ քաղաքական նշանակութիւն չեն տալիս այդ հաշտութեանը, այլ կայսրի այդ քայլը մարդասիրական մի քայլ են համարում։

—Այս օրերս, Սօլսբրիի մինիստրութեան նախկին անդամ Բալֆուր իր ընտրողների առաջ քաղաքական մի ճառ արտասանեց, որի մէջ ապացուցանում էր, թէ ի նկատի ունենալով ֆրանսպրուսական բարեկամութիւնը՝ Անգլիային անհրաժեշտ է մեծացնել իր նաւատորմը։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երևանի մեր թղթակիցը գրում է. «Տեղիս ուսուցիչներից մէկը պատմեց մեզ մի այսպիսի հանելուկ. Երևանի թեմական դպրոցում մի ուսուցիչ ստանում է ռոճիկ 31 դասի հաշուով, այն ինչ ոչ մի օր այդտեղ 5 դասից աւել չը կայ (վեցերորդ դասերը երգեցողութիւն է)։—Այդ մի դասը ինչպէս է աւանդվում, կամ եթէ չէ աւանդվում, ինչու ռոճիկը աւել է ստացվում, հարցրեց ուսուցիչը։ Մենք շատ մտածեցինք, բայց վճռել չը կարողացանք, ուստի հրապարակ հանելով՝ կը ցանկանայինք, որ գտնէ ընթերցողները լուծէին»։

* * *

—Ի՞նչու էք բեմից հրաժարվել, պ. Պեննէմէճեան.

—Ըչթա, քիթէք, մենք այնպէս սուտ հրաժարեցանք, մտածեցինք թէ քոմիթէն չուտ չի ընդունիր մեր հրաժարականը... քէթ մի անգամ կը ինդրի...

—Քու հօրն ողորմի, քոմիթէյի աչքի լիսն էիր այ... Ձեր պատիւքի չափ էլա խելք չունիս.—մարդ կայ որ կը հրաժարի—կը ինդրեն, մարդ էլ կայ որ կը ինդրեն—չի հրաժարվիլ («Ցարազ»)։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ Թագաւոր Կայսրը ջերմ չունի, քունը և ոյժերը բարւոքվում են։

ՊԱՐԻԶ, 21 յունվարի։ Պատգամաւորների ժողովում վիճաբանութիւններ սկսվեցին նաւատորմի մասին։ Ծովային մինիստրը պնդում է, որ Ֆրանսիան զրկված չէ ոչ ինքնապաշտպանութեան միջոցներից, ոչ էլ պաշտպաններից։ Պատգամաւորների ժողովը հաւատարմութեան քուէ տուեց պետական իշխանութիւններին։

ԲԵԼԳՐԱԴ, 21 յունվարի։ Միլան այս օրերս նիշ կերթայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ Այսօր, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրի օգնականի նախագահութեամբ, դէմսավոր և քաղաքային վարչութիւնների կողմից եղած պատգամաւորների մասնակցութեամբ, խորհրդակցութիւններ սկսվեցին՝ դէպի հիւսիս երկաթուղիների կառուցման առիթով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ Որովհետև Թագաւոր Կայսրը սկսել է առողջանալ՝ բիւլետէնները ընդհատվում են։—Մինիստրների մասնաժողովին առաջարկված է «Քաղաքների բարեկարգութեան վերաբերեալ աշխատանքների ընկերութեան» կանոնադրութիւնը։ Հիմնական դրամագլուխը 1 միլիոն է։—Պետական կալուածների մինիստրութիւնը կազմում է Կովկասում և Զէրնօմորեան շրջանում, Սուխումում և Սոչիում, օրինակելի գիւղատնտեսական և այգեգործական հիմնարկութիւններ։—Ֆինանսների մինիստրութիւնը առանձին հսկողութիւն է նշանակում պայթող նիւթեր պատրաստող գործատների վրա։

ԲԵՐԼԻՆ, 22 յունվարի։ Ասում են, որ ռուս-գերմանական առևտրական դաշնագիրը եկող շաբաթ կը տպվի պաշտօնական լրագրում և փետրվարի կէսին կառաջարկվի պարլամենտին։—Բիսմարկ դիտաւորութիւն ունի ձմեռը Բերլինում անցկացնել։

ԲԵՐԼԻՆ, 23 յունվարի։ Այստեղի անգլիական ընդհանուր հիւպատոսին առաջարկված է նախազգուշացնել Բերլինով անցնող այն ոչ-անգլիացիներին, որոնք դիտաւորութիւն ունեն Անգլիա գաղթել, որ յետ կենան նրանք գաղթելուց։ Անգլիա գաղթելով նրանք շատ կը հիասթափվեն։ Փող աշխատելու շանսերը այնքան չնչին են, որ օտարահպատակները չեն կարողանում ապրուստի միջոցներ ձեռք բերել Անգլիայում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 21-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ	92 ր.	75 կ.
Բերլին վրա 100 մարկ —	45 ր.	40 »
Պարիզի վրա 100 ֆրանկ —	36 »	75 »
Ոսկի — — արժէ	7 »	42 »
Մաքսային կուպոններ —	148 »	50 »
Արծաթ — — —	— »	— »
Բորսային դիսկոնտեր —	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	103 »	50 »
— — — — 2-րդ	102⅞ »	— »
— — — — 3-րդ	101⅝ »	— »
5% ոսկեայ ընկնտա	— »	— »
4% ոսկեայ փոխառութիւն	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ	101⅞ »	— »
— — — 3-րդ	— »	— »
— — — 4-րդ	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	242 »	— »
— — երկրորդ —	225 »	74 »
Պետական երկաթուղային ընկնտա.	103 »	— »
4½ ընկնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան	95⅛ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100⅞ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — —	190 »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	99⅛ »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.		
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	152 »	— »
— — — թղթադ.	101 »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	100⅝ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100⅞ »	— »
Օդեսայի — —	100 »	50 »
Թիֆլիսի — —	98 »	25 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի	98 »	25 »
— — Ռոստովի —	98 »	25 »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ

Ցայտարարվում է ի գիտութիւն հայ թարգմանիչների՝ որ Փարրարի աշխատասիրութիւնը «Յիսուս Քրիստոսի կեանքը» արդէն բոլորովին պատրաստ է տպագրութեան համար։
(№ 9) 1—1

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՐՈԻՆՈՎԻ ՄՕՏ
Վաճառվում են ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ լուսանկար պատկերները.
1) Մեծադիրը, պատից կախելու, ճանապարհածախսով հանդերձ—3 ռուբլի։
2) Կաբինէտային, ճանապարհածախսով—40 կ.
Յանկացողները պէտք է դիմեն այս հասցէով.
Тифлисъ. Фотографія Роинова, на Эриванской площади. Կարելի է ստանալ և վերադիր վճարով наложен. платежъ.) (№ 25) 5—10

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Հայկական ներկայացումն Բաժանորդագրութիւն 16.
Հինգշաբթի, յունվարի 27-ին, հայ դերասանական խումբը կը ներկայացնէ՝
I. „ՍԿԱՊԷՆԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ“
կամ 3 գործ., հեղ. Մոլիէրի, թարգմ. Ց. Լալայեանի
II. „ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԹՈՐԻԿ“
վոդ. 1 գործ.
Սկիզբն է ճիշդ 7½ ժամին։ Տեղերի գինը սովորական է։ 1—2

„РУССКІЯ ВѢДОМОСТИ“
УСЛОВІЯ ПОДПИСКИ: Въ Москвѣ: на 12 мѣс. 10 р., на 6 мѣс. 5 р. 50 к., на 3 мѣс. 3 р., на 1 мѣс. 1 р. 30 к. На города: на 12 мѣс. 11 р., на 6 мѣс. 6 р., на 3 мѣс. 3 р. 50 к., на 1 мѣс. 1 р. 50 к. За границу: на 12 мѣс. 18 р., на 6 мѣс. 9 р., на 3 мѣс. 4 р. 80 к., на 1 мѣс. 1 р. 90 к.
Подписка и объявленія принимаются ежедневно въ Москвѣ въ конторѣ газеты (Чернышевскій пер., близъ Никитской, домъ № 7), въ будни—отъ 9 ч. утра до 5 ч. вечера, въ праздники—отъ 10 ч. утра до 2 ч. дня.
За перемѣну адреса г.г. подписчики какъ московскіе, такъ и иногородные, платятъ 20 к. Московскіе-же подписчики, переходящіе въ иногородные, приплачиваютъ за почтовые расходы по 10 к. за каждый мѣсяцъ, причемъ необходимо сообщать наканунѣ переѣзда прежній и новый адресъ.
Подписка считается съ 1-го числа каждаго мѣсяца, причемъ годъ считается съ 1-го января по 1-е января слѣдующаго года и одинъ годъ съ другимъ не сливается.
О каждой перемѣнѣ адреса просятъ сообщать отдѣльно. 1—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Հ. Յ. ՕՐԲԷԼԻ
Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։
(№ 145) 117—150

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА
HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նումէրներ որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նումէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ ռէստօրան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ։
Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։
(№ 21) 64—130 (2.)

ԵՐԵՒԱՆՈՒՄ ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ԴԵՂԱՏԱՆ ՊԱՀԵՍՏԻՍ դիրքը մեծացնելով, ընդունում եմ պատուէրներ ԴԵՂԵՐԻ և ԿՈՍՄԵՏԻԿԱՆԵՐԻ։ Դեղագործներին և բժիշկներին զիջում։
Դիմել՝ ЭРИВАНЬ, новый аптекарскій магазинъ Александра Никитича Акопьянца. ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
№ 15 (ե.) 8—10

Նոյեմբերի 1-ից կը ստացվի ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԲՐՈՒՍՍԱՑԻ ԲՈՒԺՈՒԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն յայտնի է ամբողջ Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով։ Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի „Էկօնոմիտես“ ֆիրմայից։ Գնել ցանկացողները կարող են դիմել ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բագվում. Նուխում Աղա-Մուսա Մահմէդովին.
Այս հասցէով. Бр. Мнацаканянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ.
(ե. շ.) 18—32

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մորթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և անտեսական զորձիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։
(№ 67) 60—100 (ե. շ.)

ԶՈՒԻ ՍԱՊՈՆ
ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО.
ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО
ВѢСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.
Ա. ՍԻՄՈՒԵԻ ԸՆԿ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Դպրոցական 10-ի դիմաց 2-ը։ Դիմել միայն գլխաւոր մագազինը։ Մագազինում կան միայն գերազանցիկ ապրանքներ։ Գինը մատչելի։ Գլխաւոր մագազին № 4. Գլխաւոր մագազինի մագազինները Թիֆլիսում՝ Դարբանի փողոցում է, որ դա իր գրասենեակն է։ (№ 17) 3—3
19—52 (2) № 86

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Января 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.